ԿՐՕՆԱԿԱՐԳԻՏԱԿԱՆ

Տ. ԲԱԳՐԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՍՏԱՆՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ Ս. ՂԵՒՈՆԴՅԱՆՑ ՔԱՀԱՆԱՅԻՑ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԵՒ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

(10 փետրվարի, 2015 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Ես լսեցի Տիրոջ ձայնը, որն ասում էր.
«Ո՞ւմ ուղարկեմ կամ ո՞վ կգնա այդ ժողովրդի մոտ»:
Ու ես ասացի. «Ահավասիկ ես, ի՛նձ ուղարկի՛ր»
(Ես. Զ. 8):

Փառքի, զոհության, ուրախության, բարեխոսություն հայցելու եւ միեւնույն ժամանակ պատասխանատվության օր է այսօր. խնդրում ենք բարեխոսությունը Ղեւոնդյանց մեր նահատակ հայրերի եւ հայցում նրանց առաջնորդող ներկայությունը մեր կյանքում:

Այսօր մեր Սուրբ Եկեղեցու մեծագույն տոներից է, նահատակության եւ հաղթանակի վկայության տոներից մեկը, որը պատմության մեջ ամփոփված եւ վերջացած իրադարձություն չէ, այլ շարունակվում եւ շարունակվելու է այնքան ժամանակ, որքան այս երկրի վրա գոյություն է ունենալու Տիրոջ Սուրբ Եկեղեցին: Այն լցվելու, առատանալու է ասպվածային շնորհներով, այդ Սուրբ Եկեղեցուց բաշխվելու է Տիրոջ զոհաբերվող եւ հաղթանակ պարգեւող մարմինն ու արյունը, նրա կյանքը առատանալու է նորադարձ քրիստոնյաներով, խորաններից վկայելու է մարգարեական եւ ասպվածային ճշմարտության մասին, մեկնելու է հեռավոր վայրեր՝ առաքելական անհոգնությամբ տարածելու Տիրոջ կենսատու խոսքը:

Եւ այսօր, հենց այս զգացումով ու ապրումներով, այդ հավիտենական ճշմարտության գիտակցությամբ, ասպվածային նախախնամությամբ եւ Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությամբ խնդրեցինք ու աղոթեցինք՝ մեր ձեռքը դնելով նորընծա քահանա հայրերի գլուխներին. մեր Եկեղեցու ութ նոր քահանա

հայր՝ մարգարեությամբ, առաքելական ուսուցմամբ, արքայական պատվով ու Ղեւոնդյանց նահատակության բարձր գիտակցումով այս Սուրբ Խորանի վրա ուխտեց առնել եւ ուսուցանել, ուխտեց կոչվել այնտեղ, ուր Սուրբ Հոգին կկանչի, ուխտեց բժշկություն կատարել մեր ժուովրդի կյանքում, բանալ աչքերը, բացել ականջները եւ առաջնորդել իրեն վստահված հոտը:

Այսօր վստահ եմ, որ ցնծում է ոչ միայն երկրում ապրող զինվորյալ Եկեղեցին, այլեւ երկնքում բույլ կազմած, շուրջպար բռնած՝ հաղթանակած Եկեղեցին: Եւ այս զգացումներն էին իմ մեջ այս քանի օրերին՝ հոգեւոր պատրաստություն խնդրելով Տիրոջից, որ իմ անարժան ձեռքով կատարված այս ձեռնադրությունն ու օծումն արժանավոր դարձնի մեր շատ սիրելի քահանա հայրերին: Այս զգացումն էր, որ ինձ անընդհատ մղում էր ընթերցելու, աղոթելու խոսքերով Եսայի մարգարեի, ով կանգնած էր Աստծու փառքի առջեւ՝ չերկյուղելով իր տեսիլքից, տարակուսած եւ շփոթված, թե ինչ պատվի է արժանացել՝ Տիրոջ այցելությունն ունենալով: Չվարանեց նաեւ հարցնել, թե ինչպես պետք է Տիրոջ ճշմարտությունն իր պիղծ շուրթերով քարոզի մեղսագործ ժողովրդին: Աստված կրակով սրբեց մարգարեի շուրթերը, եւ այդ զգացողությունն ինձ համար չմնաց միայն Սուրբ Գրքում, այլ այսօր հենց այս Սուրբ Խորանի վրա Սուրբ Հոգու այդ կրակը կարծես թե մաքրում է մեր շուրթերը: Եւ չտատամսեց մարգարեն, կանգնեց Աստծո առջեւ ու ասաց. «Եւ դու հարցնում ես, թե ում ուղարկես այդ ժողովրդի մոտ. ահավասիկ ինձ, ո՛վ Տեր, ուղարկի՛ր ինձ, հանձն եմ առնում գնալ ու քարոզել Քո ճշմարտությունն այդ ժողովրդին, ցույց տալ Քո Լույսի ճանապարհները, ապրել նրա ցավով եւ ուրախությամբ, զգալ նրա տառապանքն ու պարգեւել հաղթանակի շնորհը, լինել առաջնորդ՝ առանց երկյուղի, երկմտելու, առանց տատամսելու, ամաչելու, քաջությամբ, Քո խոսքի առաջնորդությամբ եւ Սուրբ Հոգու հրեղեն ներկայությամբ» (հմմտ. Ես. Զ. 8):

Եւ իմ միտքը վերադառնում է մարգարեների ժամանակը, առաքյալների քարոզչությանը, մեր հայրերի, Ղեւոնդյանց եւ Վարդանանց մեծ սրբերի նահատակության վկայությանը, ցեղասպանության միջով անցած մեր ժողովրդի վերընձյուղված, հաղթանակած եւ օրհնված ճշմարտությանը, հարութենական իրականությանը: Ցանկանում եմ մեր հայացքը սեւեռել՝ ասելով, որ հալածանքների շրջանը չի ավարտվել եւ չի ավարտվելու, քանի դեռ այս Սուրբ Եկեղեցին կանգնած է, գործում է ու խոսելու է Աստծո մասին, վկայելու է Նրա ճշմարտությունը, եւ հալածանքն էլ լինելու է մեր պատիվը, փառքն ու այլությունը, մեր տարբերությունն այս աշխարհից: Հալածանքը մեզ չի ընկճելու, ինչ տեսքով էլ որ գա՝ սրով, հրով թե այլ կերպ: Եւ կարծես այս օրերի մասին էին վկայում Ղեւոնդյանք՝ շուրթերով Ղեւոնդ երեցի, որն իր եւ իր ողջ ժողովրդի նահատակության պահին դուրս գալով հալածող թշնամու դիմաց, գոտեպնդելով՝ ասում

Նորաօծ քահանաների ընդունելություն հին Վեհարանում

է. «Մարդկանց միջից հեռացնենք խավար խորհուրդը մոլորեցնողների, նրանց եղկելի ու ողորմելի համարենք, մանավանդ որ կամավորապես են ուրացել եւ ոչ պարտադրված. նրանք երբեք չեն գտնելու ճշմարտության ճանապարհը: Կուրացածները վրիպեցին կյանքից, իսկ դուք, որ հավատքով ընդունեցիք, որդի եք եւ ոչ օտար, սիրելի եք եւ ոչ թշնամի, ժառանգորդն եք Վերին իմանալի քաղաքի»: Այս է մեր ճշմարտությունը, այս զգացումով է, սիրելի՛ քահանա հայրեր, որ ձեզ այսօր կոչեցինք՝ ձեռնադրելով ու օծելով Տիրոջ այգում եւ անդասպանում՝ լինելու կոյրերին լույս պարգեւող, խավարի մեջ մնացողին դուրս բերող, դեպի ճշմարտություն առաջնորդող, լինելու եւ մնալու հավատարիմ զավակները Ամենայն Հայոց Հայրապետի, նվիրյալ ծառաները Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու, լինելու խոնարհ, հեզ, համբերող, սիրող... Չվախենա՛ք ու չքաշվե՛ք ոչնչից, չամաչե՛ք այն լուծից, որ առել եք ձեր ուսերին, քարոզե՛ք Տիրոջ մասին ամեն օր, ամեն ժամ՝ լինի փողոցում, Եկեղեցում թե որեւէ այլ վայրում... Չմիախառնվեք աշխարհին, չդառնաք նույնը աշխարհի հետ, այլ այսօրվա խորհուրդը մշտապես ձեր մտքում ունենալով՝ ապրե՛ք Ղեւոնդյանց նահատակների առաջնորդությամբ ու Սուրբ Հոգու վառող կրակով, դարձե՛ք իրապես քահանա, ինչպես մեր հայրերից Խոսրով Անձեւացին է ասում. «Լինելու Աստծու բերանը ժողովրդի համար եւ ժողովրդի բերանը Աստծո համար»: Աստված թո՛ղ Իր հետ կնքած ուխտի մեջ ձեզ հաստատուն պահի, չասասանվե՛ք, ձեր ուսերին է դրված Նրա խոսքը քարոզելու պարտականությունը, լցրե՛ք ձեր կյանքը Սուրբ Հոգով, առե՛ք ձեր ուսերին Տիրոջ լուծը, քանզի այն քաղցր է...

Վեհափա՛ռ Տեր, թույլ տվեք որդիական խոնարհությամբ մեր խորին երախտագիտությունը հայտնել այս ծննդյան Սուրբ Խորանից Ձեզ զավակներ պարգեւելու շնորհի համար: Թո՛ղ Ձեր զավազանը հաստատ մնա մեր ժողովրդի կյանքում, Ձեր աջը հովանավոր ու հովանի լինի մեզ: Մեր շնորհավորանքները Սրբազան հայրերին, վարդապետներին, քահանաներին ու սարկավագներին. ովքեր կզգան այսօրվա ճշմարտությունն ու իրականությունը, թո՛ղ ապրեն դրա մեջ, ովքեր ապրում են այդ գիտակցումով, թո՛ղ ավելի զորանան:

Եւ տա՛ռք Աստծո, սիրելի՛ հոգեւոր եղբայրներ, այսօր մեր կյանքն ընթանալու է Տիրոջ առաջնորդությամբ, եւ երբեք ընկճում չի լինելու: Դուք եք հույսն ու լույսը մեր ժողովրդի, ուստի ապրեք ժողովրդի ցավով եւ ուրախությամբ:

Սիրելի՛ ժողովուրդ, այսօր նոր քահանաներ ու ծառաներ, հոգեւոր եղբայրներ եւ առաջնորդներ ունեցաք, աղոթենք ու փառք տանք Աստծուն՝ Ամենակալ մեր Տիրոջը՝ ասելով. «Տերն է մեր Հայրը, Տերն է մեր դատավորը, Տերն է մեր իշխանը, Տերն է մեր թագավորը, Տերն է մեր փրկիչը, ու Նա է առաջնորդելու եւ փրկելու մեզ. ամեն»: